

Կենսաբազմազանության պահպանություն

Ի՞նչու են պահպանության գործողություններ նախատեսված

- Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է բնական կենսամիջավայրի, այդ թվում՝ *Մատունի ծիրանավոր* հազվադեպ ալպիական բուսատեսակի և *Գորշ արջ* տեսակի “կրիտիկական կենսամիջավայր”-ի որոշակի կորուստ:
- Չնայած Ծրագրի շրջանակներում ազդեցությունների հնարավոր նվազեցմանն ուղղված ջանքերին և հանքի փակումից հետո նախատեսվող վերականգնման ծրագրին, Լիդիանն այնուամենայնիվ ընդունում է կենսաբազմազանության կողմից կրած որոշ ազդեցությունների հարատևության փաստը:

Ո՞րն է Լիդիանի մոտեցումը պահպանության հարցերին

- Մոտեցումը հետևյալն է, ըստ առաջնահերթության. առաջինը՝ կանխարգելել ազդեցությունները, երկրորդը՝ նվազեցնել անխուսափելի ազդեցությունները և երրորդը՝ վերականգնել բուսականության ու կենսամիջավայրերի սկզբնական վիճակը: Երկարաժամկետ հեռանկարում կենսաբազմազանության գրոյական գուտ վնաս ապահովելու համար ձեռնարկված վերոգրյալ գործողությունների անբավարարության դեպքում, Լիդիանը պարտավորվում է ձեռնարկել պահպանությանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
- Պահպանության բոլոր գործողությունները մշակվելու են համապատասխան տեղական և միջազգային մասնագետների հետ խորհրդակցելով, իսկ անհրաժեշտության դեպքում հիմնված են լինելու մանրակրկիտ գիտահետազոտական ծրագրերի վրա: Նախատեսվում է տեղացի շահագրգիռ կողմերի ներգրավում որոշումների կայացման գործընթացում:

Պահպանությանն ուղղված նախատեսվող գործողություններ

- Ամուլսար լեռան վրա, մասնավորապես՝ Արշակ վայրում, նախատեսվում է ստեղծել բնական բուսականության առանձնացված տարածք, որտեղ չեն իրականացվելու աշխատանքներ, և որն ապահովելու է *Մատունի ծիրանավոր* բուսատեսակի կենսունակ պոպուլյացիայի և *Գորշ արջի* և ալպիական թռչունների համար կենսամիջավայր:
- Բուսականության կողմից կրած ազդեցությունների փոխհատուցման նպատակով Լիդիանը նախատեսում է Ծրագրային տարածքից դուրս ստեղծել փոխհատուցման ծրագիր: Այն հիմնադրվելու է Ջերմուկում նոր Ազգային պարկի շրջաններում, իսկ տարբերակների ուսումնասիրման հետ կապված Լիդիանը համագործակցելու է կառավարության և հասարակական կազմակերպությունների հետ:
- Ներկայումս հետազոտվում են *Մատունի ծիրանավոր* բուսատեսակի տեղափոխման և աճի խթանման հնարավորությունները: Լիդիանը համագործակցում է Քեմբրիջի համալսարանի և ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի փորձագետների հետ՝ տվյալ բուսատեսակը բուսաբանական այգիներ տեղափոխելու ուղղությամբ, ինչն անհրաժեշտ է Ամուլսարի հանքի շահագործումից հետո տվյալ բուսատեսակի պոպուլյացիայի վերականգնման համար: Անհրաժեշտության դեպքում, “կրիտիկական կենսամիջավայրի” արդյունավետությունն ապահովելու նպատակով նախատեսվում է դիտարկել փոխհատուցման տարբերակներ:
- *Գորշ արջի* երկարաժամկետ գոյատևման համար անհրաժեշտ պահպանության հատուկ միջոցառումների անհրաժեշտությունը պարզելու համար, ներկայումս, Ծրագրի տարածքի սահմաններում իրականացվում է կենդանու կենսամիջավայրի և դրա կիրառման ելակետային ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում նախատեսվում է իրականացնել պահպանության հատուկ գործողություններ բնական կենսամիջավայրերի համար նախատեսված փոխհատուցման շրջանակներում:

